

Քաջ Նազարի կոդիչը

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 128 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է...

Տեղանքը, որտեղով ընթանում է Քաջ Նազարի ձին ներկայացված է 1-երից և 0-ներից կազմված մատրիցի տեսքով: 0-ներով նշված են դատարկ տեղերը, 1-երով՝ փտած ծառերը, կամ գուցե դրանք եղեգներ էին: Ձին ընթանում է j -րդ սյունով վերևից ներքև մեկ միավոր ժամանակում մեկ տող իջնելով ներքև: Նազարն այդ ընթացքում հերթով թեքվում է մեկ աջ, մեկ ձախ և իր ձեռքի գերանով տապալում է իր թեքվելու ուղղությամբ մինչև k հեռավորության վրա գտնվող վանդակներում գտնվող բոլոր ծառերը: Սկզբում նա թեքվում է աջ: Ձին իր հերթին սմբակներով հարվածում և արմատահան է անում իր ուղղությամբ հանդիպող բոլոր ծառերը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են մատրիցի տողերի n , սյուների m քանակները ($1 \leq n, m \leq 100$), j և k թվերը ($1 \leq j, k \leq m$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ արմատահան եղած ծառերի քանակը:

Օրինակ

Մուտք	Ելք
5 6 2 3 0 1 1 0 0 1 1 1 0 1 1 0 0 1 1 0 1 1 1 0 1 0 1 0 1 1 1 0 0 0	10

Օրինակի պարզաբանումը

Նազարի ձին սլանում է երկրորդ սյունյակով վերևից ներքև: Նազարի ձեռքի գերանի երկարությունը 3 է: Առաջին տողում նա աջ է թեքվում և տապալում 1 ծառ: Երկրորդ տողում նա ձախ է թեքվում և տապալում ևս մեկ ծառ: Երրորդում աջ է թեքվում և տապալում երրորդ տողի 3-րդ և 5-րդ սյուններում գտնվող փտած ծառերը: Մեկական ծառ էլ տապալում է 4-րդ և 5-րդ տողերում: Ընդամենը Նազարը տապալում է 6 ծառ: Ձին իր հերթին տապալում է երկրորդ սյունում գտնվող 4 ծառերը: Ընդամենը ստացվում է 10 տապալված ծառ: